



ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕԵՍԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՈՒ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻՍԿՐ 2021

196

DIMANCHE, 10 Janvier 2021



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ե Օր Ս. Ծննդեան
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆ
5^{EME} JOUR DE NOËL
DÉNOMINATION

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (12.18-27)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (1. 39-56)

Les lectures de la Bible d'aujourd'hui
HÉBREUX 12.18-25
LUC 1.39-56

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ. ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébrant:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

| | |
|--------------------------------------|----------|
| Առաւօտեան Ժամերգութիւն - | 9:30-ին |
| Office Matines à | 9h30 |
| Ս. Պատարագ- ուղիղ սփռում - | 10:30-ին |
| La Sainte Messe – En direct à | 10h30 |
| Հոգեհանգստեան | |
| յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- Ժամը | 12:00-ին |
| Spécial Office Réquiem - En direct à | 12h00 |

Organiste: Mme Houry Manoukian
Chanteur : M Vahram Sargsyan

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՐԲՍՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (12.18-27)

Ո՛չ մէկը թող ըլլայ պոռնկող, կամ սրբապիղծ՝ Եսաւի պէս, որ մէկ կերակուրի համար ծախեց իր անդրանկուրեան իրաւունքը: 17Բանի որ գիտէք թէ յետոյ՝ երբ ուզեց ժառանգել օրինութիւնը՝ մերժուեցաւ, թէպէտ փնտռեց զայն արցունքով, որովհետեւ իր ապաշխարութիւնը անօգուտ եղաւ`:

18Արդարեւ դուք մօտեցած չէք շօշափելի լերան՝ որ կը վառեր կրակով, ո՛չ ալ մթութեան, խաւարին ու մրրիկին, 19Եւ փողին շառաչին ու խօսքերուն ձայնին. զայն լսողները խնդրեցին որ այդ խօսքը այլեւս չըսուի իրենց: 20(Արդարեւ չէին կրնար տոկալ այդ պատուերին. «Եթէ նոյնիսկ անասուն մը դպչի լերան՝ պիտի քարկոծուի»): 21Ա՛յնպէս ահարկու էր երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ. «Սաստիկ կը զարհուրիմ ու կը դողամ»): 22Բայց դուք մօտեցած էք Սիոն լերան, ապրող Աստուծոյ քաղաքին՝ երկնային Երուսաղէմին, բիւրաւոր հրեշտակներու համաժողովին, 23Երկինքը արձանագրուած անդրանիկներու համախմբումին, Աստուծոյ՝ որ բոլորին Դատաւորն է, արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարելութեան հասած` են, 24Յիսուսի՝ որ նոր ուխտի միջնորդն է, եւ սրսկումի արիւնին՝ որ կը խօսի Աբելի արիւնէն աւելի լաւ:

25Զգուշացէ՛ք որ չմերժէք ան՝ որ կը խօսի ձեզի. որովհետեւ եթէ պատիժէ չխուսափեցան անոնք՝ որ մերժեցին երկրի վրայ Աստուծոյ պատգամները տուողը, ո՛րչափ աւելի մենք՝ եթէ երես դարձնենք երկինքէն խօսողէն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 1.39-56

39Այդ օրերը Մարիամ կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝ Յուդայի մէկ քաղաքը, 40մտաւ Չաբարիայի տունը եւ բարեւեց եղիսաբէթը: 41Երբ եղիսաբէթ լսեց Մարիամի բարեւը, երախան

խայտաց անոր որովայնին մէջ. իսկ եղիսաբէթ լեցուեցաւ Սուրբ Յոզիով, 42ու բարձրաձայն գոչելով ըսաւ. «Դուն օրհնեա՛լ ես կիներուն մէջ, եւ օրհնեա՛լ է որովայնիդ պտուղը: 43Այս ի՞նչպէս եղաւ, որ իմ Տէրոջս մայրը եկաւ ինձի. 44որովհետեւ ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս, երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: 45Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝ պիտի կատարուին այն բաները՝ որոնք Տէրոջմէն ըսուեցան իրեն»: 46Մարիամ ըսաւ. «Իմ անձս կը մեծարէ Տէրը, 47եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծոմովս, 48քանի որ նայեցաւ իր աղախինին նուաստութեան. արդարեւ ահա՛ ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի կոչեն զիս, 49որովհետեւ Հօգորը մեծամեծ բաներ ըրաւ ինձի: Անոր անունը սուրբ է, 50եւ անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ: 51Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեւակայութեամբ: 52Օրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները: 53Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները: 54Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը: 55Ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝ յաւիտեան»: 56Մարիամ անոր քով մնաց՝ գրեթէ երեք ամիս, ապա վերադարձաւ իր տունը:

Hébreux 12.18-25

16Que nul [de vous] ne soit fornicateur, ou profane comme Esaü, qui pour une viande vendit son droit d'aïnesse. 17Car vous savez que même désirant ensuite d'hériter la bénédiction, il fut rejeté : car il ne trouva point de lieu à la repentance, quoiqu'il l'eût demandée avec larmes. 18Car vous n'êtes point venus à une montagne qui se puisse toucher à la main, ni au feu brûlant, ni au tourbillon, ni à l'obscurité, ni à la tempête, 19Ni au retentissement de la trompette, ni à la voix des paroles, [au sujet de] laquelle, ceux qui l'entendaient prièrent que la parole ne leur fût plus adressée; 20Car ils ne pouvaient soutenir ce qui était ordonné, [savoir], Si même une bête touche la montagne, elle sera lapidée, ou percée d'un dard. 21Et Moïse, tant était terrible ce qui paraissait, dit : Je suis épouvanté et j'en tremble tout. 22Mais vous êtes venus à la montagne de Sion, et à la Cité du Dieu vivant, à la Jérusalem céleste, et aux milliers d'AnGES, 23Et à l'assemblée et à l'Eglise des premiers nés qui sont écrits dans les Cieux, et à Dieu qui est le juge de tous, et aux esprits des justes sanctifiés; 24Et à Jésus,

le Médiateur de la nouvelle alliance, et au sang de l'aspersion, qui prononce de meilleures choses que [celui] d'Abel.

25Prenez garde de ne mépriser point celui qui [vous] parle; car si ceux qui méprisaient celui qui [leur] parlait sur la terre, ne sont point échappés, nous serons punis beaucoup plus, si nous nous détournons [de celui qui parle] des Cieux;

Luc 1.39-56

39Or en ces jours-là Marie se leva, et s'en alla en hâte au pays des montagnes dans une ville de Juda. 40Et elle entra dans la maison de Zacharie, et salua Elisabeth. 41Et il arriva qu'aussitôt qu'Elisabeth eut entendu la salutation de Marie, le petit enfant tressaillit en son ventre, et Elisabeth fut remplie du Saint-Esprit. 42Et elle s'écria à haute voix, et dit : tu es bénie entre les femmes, et béni [est] le fruit de ton ventre. 43Et d'où me vient ceci, que la mère de mon Seigneur vienne vers moi? 44Car voici, dès que la voix de ta salutation est parvenue à mes oreilles, le petit enfant a tressailli de joie en mon ventre. 45Or bienheureuse est celle qui a cru : car les choses qui lui ont été dites par le Seigneur, auront [leur] accomplissement. 46Alors Marie dit : Mon âme magnifie le Seigneur; 47Et mon esprit s'est égayé en Dieu, qui est mon Sauveur. 48Car il a regardé la bassesse de sa servante; voici, certes désormais tous les âges me diront bienheureuse. 49Car le Puissant m'a fait de grandes choses, et son Nom est Saint. 50Et sa miséricorde est de génération en génération en faveur de ceux qui le craignent. 51 Il a puissamment opéré par son bras; il a dissipé les desseins que les orgueilleux formaient dans leurs cœurs. 52 Il a renversé de dessus leurs trônes les puissants, et il a élevé les petits. 53 Il a rempli de biens ceux qui avaient faim; il a renvoyé les riches vides. 54 Il a pris en sa protection Israël, son serviteur, pour se souvenir de sa miséricorde; 55 (Selon qu'il [en] a parlé à nos pères, [savoir] à Abraham et à sa postérité) à jamais. 56 Et Marie demeura avec elle environ trois mois, puis elle s'en retourna en sa maison.



ՏՕՆԵՐ

**Չորեքշաբթի, 13 Յունուար
2021**

Քրիստոսի Անուանակոչութեան տօն

Ըստ հրեական օրէնքի՝ ծննդեան 8-րդ օրը Յիսուս, ինչպէս նորածին ամէն արու զաւակ, թլփատուեցաւ եւ անուանակոչուեցաւ: Այդ մասին կը վկայէ Ղուկաս անետարանիչը. «Եւ երբ ութ օրերը լրացան, եւ ան թլփատուեցաւ, անոր անունը Յիսուս դրուեցաւ, ինչպէս հրեշտակին կողմէ կոչուած էր, երբ դեռ չէր յղացուած մօր որովայնին մէջ» (Ղուկ. 2:21): Յիսուս կը նշանակէ Փրկիչ: Գաբրիէլ հրեշտակը, Աստուածամօր անտելով Աստուծոյ Որդւոյն ծննեյան մասին, կը նշէ, որ մանկան անունը Յիսուս կը դնէք:

Այս մասին կրկին կը վկայէ նոյն անետարանիչը. «Եւ ահա դուն կը յղանաս եւ կը ծնանիս որդի մը եւ անոր անունը Յիսուս կը դնես» (Ղուկ. 1:31): Յիսուս անուան զուգահեռ Փրկիչին կը տրուի նաեւ Քրիստոս անունը: Այն Յունարէն բառ է, որ կը նշանակէ Օծեալ եւ կը համապատասխանէ եբրայերէնի Մեսիային: Փրկիչի անուանակոչութեան տօնին հայոց բոլոր եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Սուրբ Պատարագ, իսկ նախորդ օրը երեկոյեան ժամերգութեան աւարտին կը կատարուի նախատօնակի արարողութիւն:



Չինգշաբթի, 14 Յունուար 2021

Ս. Յովհաննէս Կարապետի ծննդեան տօն

Չայ Առաքելական Եկեղեցին կը նշէ Յովհաննէս Մկրտիչի՝ Կարապետի (որ անտեղ Յիսուս Քրիստոսի գալուստը) ծննդեան տօնը: Յովհաննէս Մկրտիչի ծնունդը մանրամասն նկարագրած է Ղուկաս Անետարանիչը (Ղուկ. 1:5-25): Յովհաննէսի հօրը՝ Չաքարիա քահանային Տիրոջ տաճարին մէջ ինկարկութեան ժամանակ կը յայտնուի Տիրոջ հրեշտակը եւ կ'անտէ անտէ որդւոյն ծննդեան մասին: Սակայն ծեր Չաքարիան թերահաւատութեամբ կ'ընդունի



բարի լուրը եւ կասկածամտութեան համար, որպէս պատիժ, մինչեւ իր որդւոյն ծնունդը կը դառնայ համր:

Յովհաննէս Մկրտիչը, որ պիտի մկրտեր համայն մարդկութեան Փրկիչին, ճանաչցած եւ Յիսուսի աշխարհ գալստեան համար ցնծացած էր դեռևս Անոր ծնունդէն առաջ: Աւետարանիչը կը վկայէ, որ երբ Աստուածամայր Մարիամ կ'այցելէ Եղիսաբէթին՝ Ս. Մկրտիչի մօր, վերջինս, լեցուելով Սուրբ Հոգիով, կը բացականչէ. «Ուրտեղէ՛ն ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ, որովհետև ահաւասիկ, երբ քու ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնին մէջ» (Դուկ. 1:43-44): Եղիսաբէթի խօսքին շարունակութիւնը այս տօնին պատգամն է համայն քրիստոնէաներուն. «Եւ երանի՜ անոր, որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմէն իրեն ըսուածները կը կատարուին»:

Holidays

Wednesday, January 13, 2021

Feast of Naming of Our Lord Jesus Christ

Each year, on January 13, the Armenian Apostolic Church celebrates the Feast of Naming of Our Lord Jesus Christ. As Evangelist St. Luke writes in his Gospel, according to the Jewish tradition “On the eighth day, when it was time to circumcise him, he was named Jesus, the name the angel had given him before he had been conceived.” (Lk 2:21). “Jesus” is a Hebrew word meaning “Savior”. According to the Gospel according to Luke when the angel Gabriel came to Mary to give her the good tidings of the birth of the Son of the Most High, he said that Mary would name the baby “Jesus”. “You will be with child and give birth to a son, and you are to give him the name Jesus.” (Lk 1:31).

Parallel to the name “Jesus” the name “Christ” is given to the Savior, which is a Greek word meaning “Consecrated” and corresponding to the Hebrew word “Messiah”.

On the Feast of Naming of Our Lord Jesus Christ a Divine Liturgy is celebrated in all Armenian Churches. On the eve of the feast, following the evening service a special service is conducted.



Thursday, January 14, 2021

**Feast of the Birth of St. John the Forerunner
(Baptist)**



The birth of St. John the Baptist is described in details in the Gospel according to Luke (Lk 1:5-25). One day Zechariah, father of St John the Baptist, was doing his work as a priest in the Temple and was burning incense on the altar. An angel of the Lord appeared to him and said that God had heard his prayer and his wife would bear him a son. Zechariah had to name him John. Zechariah didn't believe the angel as he was an old man, and his wife was old, too. And because he hadn't believed the angel he became unable to speak and remained silent until the birth of John.

St. John the Baptist, who should baptize the Savior, had been aware and rejoiced for the birth of Jesus even before his birth. According to the Evangelist, when St. Mary, Holy Mother of God, visited Elizabeth, mother of St John the Baptist, the latter, being filled with the Holy Spirit cried out, "Why should this great thing happen to me, that my Lord's mother comes to visit me? For as soon as I heard your greeting, the baby within me jumped with gladness" (Lk 1:43-44).

Continuation of the words of Elizabeth are the message of this feast addressed to all Christians throughout the world, "How happy you are to believe that the Lord's message to you will come true!" (Lk 1:45).

ՄԱՍՆԱԿԱՈՐ ԱՂՕԹՔԻ ՀՐԱԷՐ

Կիրակի, 10 Յունուար 2021-ին, Ս. Պատարագի ընթացքին կը հրակիրենք մեր հաւատացեալները մասնաւոր աղօթքի արցախեան գոյապայքարի հետեւանքով գերեզարուածներու, անյայտ կորածներու եւ անոնց տունդարծի համար :

Այս կապակցութեամբ բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագի ընթացքին կը կատարուի մասնաւոր աղօթք :

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆՈՒԱՐ 2021



Պրն. Արթուր Մանուկեան եւ դուստրը՝ Լուի
Տ. եւ Տիկ. Արեն եւ Մատլէն Մանուկեան եւ
իրենց զաւակը՝ Ալեք
Հոգեհանգստեան պաշտօն կը ինդրեն իրենց
սիրեցեալ զակիկն եւ եղբոր՝

**ՍԱՐՕ-ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(SARO-ARMEN MANOUKIAN)**

Մահուան 17-րդ տարելիցին առիթով



Պրն. Սերժ Սիւմպիլեան եւ ընտանիքը
Տիկ. Մարի Էլլեգեան եւ ընտանիքը
Հոգեհանգստեան պաշտօն կը ինդրեն իրենց
սիրեցեալ եղբոր եւ հօրեղբոր՝

**Նորոգ Հանգուցեալ
ԺՈՐԺ ՍԻՄՊԻԼԵԱՆԻ
(GEORGE SUMBULIAN)
(Մահացած Գալիֆորնիա)**

Հոգւոյն ի հանգիստ:



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL



ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպլէ Նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժիրի Covid-19 տարածման վտանգը, **յետայսու որպէս ապահովութիւն, հաւատացեալներու ֆիզիքական ներկայութիւնը եկեղեցոյ մէջ արգիլուած է սկսեալ 9 Յունուարէն մինչեւ 8 Փետրուար 2021:**

- Յուղարկարութիւններու պարագային արտօնուած է մինչեւ 10 հոգիի ներկայութիւն, դիմակներու գործածութիւնը անհրաժեշտ է ամբողջ արարողութեան տեւողութեան ընթացքին:
- Եկեղեցոյ Կիրակնօրեայ Ա. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն կարելի է հետեւիլ առցանց եկեղեցոյ դիմատետրի Էջով – Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել Գոգեւոր Գովիկին, հեռ. (514) 448-2809:

Զեզ կը մարդենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ATTENTION

We would like to inform our parishioners that in accordance with the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

the physical presence of parishioners in the Church is now prohibited starting from January 9 until February 8, 2021.

- Up to 10 people are allowed in the case of funerals, the use of masks is required throughout the ceremony.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies can be followed online on the Church Profile page - Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱԸ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Հեռարձակում – Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Հաւատք, Մեր, Լոյս
Եւ Կեանք:

Ամեն Չորեքշաբթի
երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE
ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Chaque Mercredi
à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն
առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով:


**Nous invitons nos chers fidèles à participer à ces séances
d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.**

Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ
հաւատացեալներուն:

**Nous souhaitons a nos fidèles des moments spirituels
agréables.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԱՄԵՆԱՄԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 30 Յունուար 2021

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի»
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 30 Janvier 2021

Office du soir à 17h00.

**“C’est pourquoi je vous dis : tout ce que vous demandez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**